ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1953 Общественные науки

Ֆ. Ա. Ալեքսանյան

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՌԵԱԿՑԻՈՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Իմպերիալիզմի և պրոլետարական ռևոլյուցիաների դարաշրջանում պրոլետարիատի մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինը հենվելով Մարքսի և Էնգելսի ուսմունքի գրանիտյա հիմքերի վրա, ամբողջ խորությամբ բացահայտեց իմպերիալիզմի դարաշրջանի բուրժուազիայի հոգևոր կուլտուրայի քայքայման ու նեխման պատճառները։ Նա ցույց տվեց, որ բուրժուական կուլտուրայի ու գիտության ճգնաժամը և մանավանդ բուրժուական փիլիսոփայության ու սոցիոլոգիայի ճգնաժամը, անկումն ու նեխումը ամբողջովին պայմանավորված են արտադրության կապիտալիստական եղանակի նեխման և հետադիմության պրոցեսով, որը առանձնապես ուժեղացավ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի և նրա ընդհանուր հակասությունների առավել խորացման շրջանում։

Մի կողմից կապիտալիզմի տնտեսական ու քաղաքական սիստեմի գնալով ուժեղացող քայքայումը և մյուս կողմից կապիտալիզմի սիստեմից դուրս եկած երկրների՝ ՍՍՌՄ-ի, Չինաստանի և այլ ժողովրդա-դեմոկրատական երկրների տնտեսական ու քաղաքական հզորության աճումը նոր էտապ են կազմում համաշխարհային պրոլետարիատի ռևոլյուցիոն շարժման ասպարեզում, նոր էտապ ռևոլյուցիոն իդեոլոգիայի հաղթանակի և բուրժուական իդեոլոգիայի հարաճուն քայքայման բնագավառում։

Այդ քաղաքական և իդեոլոգիական էտապը բնութագրվում է նրանով, որ բուրժուական-դեմոկրատական ազատությունների, լիբերալիզմի հետքն անգամ չի մնացել, բուրժուական-դեմոկրատական ազատությունների դրոշը դեն է շպրտվել, ոտնահարվում է մարդկանց և ազգերի իրավահավասարության սկզբունքը։ Այդ նոր պայմաններում բուրժուական սոցիոլոգիան, անտարակույս, ավելի ու ավելի ռեակցիոն, ավելի հակաժողովրդական է դառնում, ամբողջովին կորցնում է իր կապը գիտության, առողջ բանականության հետ և ապրում է իր լիակատար քայքայման պրոցեսը։

Ժամանակակից բուրժուական սոցիոլոգիան, իդեոլոգիական կարևորագույն զենքը դառնալով ագրեսիվ կոնտրռևոլյուցիոն դասակարգերի ձեռքում, իր սուր ծայրն ուղղել է հասարակական զարգացման մարքսիստական թեորիայի դեմ։ Պաշտպանելով արտադրության կապիտալիստական եղանակը, նա օբյեկտիվորեն արտացոլում է նրա «զարգացման» վերջին էտապը, նրա նեխման ու քայքայման էտապը, իմպերիալիզմի դարաշրջանի ամբողջ հոգևոր ու նյութական կուլտուրայի հետադիմությունը, թեև նա անդադար աճպարարություն է անում «առաջադիմություն» և «քաղաքակրթություն» հասկացողություններով։

Առաջադիմության պրոբլեմը, որը միշտ հանդիսացել է փարիսեցիական բուրժուական սոցիոլոգիայի սիրած ձևը, ներկայումս դարձել է մի սին ֆրազ, որի մեջ այժմյան ռեակցիոն սոցիոլոգները դնում են այն ամենը, ինչ որ բխում է կապիտալի երկրներում տիրապետող դասակարգերի օգուտից ու շահերից։

Բուրժուազիայի առջև լակեյություն անող պրոֆեսորները այնքան ոտնահարել ու աղտոտել են առաջադիմություն և քաղաքակրթություն հասկացողությունները, որ դրանցից տարածվում է սոսկ նեխված դիակի գարշահոտություն։

Բուրժուական սոցիոլոգիան երբեք չի տվել և չի կարող տալ «առաջադիմություն» հասկացողության գիտական սահմանումը։ «Առաջադիմություն» հասկացողության այն բազմաթիվ պարադոքսալ մեկնաբանումները, որ տալիս են ներկայիս ռեակցիոն սոցիոլոգները, նպաստում են այդ հասկացողության առավել խճողմանն ու խեղաթյուրմանը։ Իսկ իմպերիալիստական ռեակցիայի ավելի բացահայտ լակեյները փորձում են բոլորովին ազատվել այդ գաղափարից։ Ով դա հասկանալի է, որովհետև «առաջադիմություն» հասկացողության գիտական մեկնաբանությունը հակասում է հետադիմող, իր դարն ապրած կապիտալիստների դասակարգի տնտեսական, քաղաքական և իդեոլոգիական շահերին։

Դրանով է բացատրվում այն սքողված թշնամանքը, որ տիրում է բուրժուական սոցիոլոգների որոշ մասում առաջադիմության և էվոլյուցիայի պրոբլեմների հանդեպ։

«Առաջադիմության և էվոլյուցիայի գաղափարները,— գրել է Լաֆարգը,— չափազանց մեծ հաջողություն ունեին 19-րդ դարի առաջին տարիների ընթացքում, երբ բուրժուազիան դեռ արբած էր իր քաղաքական հաղթանակով և իր տնտեսական հարստությունների ապշեցուցիչ աճումով։ Փիլիսոփաները, պատմաբանները, բարոյագետները, քաղաքագետները, վիպասանները և բանաստեղծները իրենց գրոտումներն ու ճառերը հրամցնում էին պրոգրեսիվ զարգացման քողի տակ... բայց 19-րդ դարի կեսերին նրանք ստիպված եղան չափավորել իրենց անզուսպ խանդավառությունը։ Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքական ասպարեզում պրոլետարիատի հանդես գալը անհանգստություն ծնեց բուրժուազիայի սրտում իր սոցիալական տիրապետության հավիտենականության համար՝ առաջադիմությունը կորցրեց իր հմայքը նրա աչքում»[1]։

Բուրժուական սոցիոլոգիան չի հանդուրժում առաջադիմությունը, թեև նա խորին կեղծավորությամբ հանդես է գալիս նրա անունից։ Գործնականում նա կատաղի պայքար է մղում աշխատավոր մասսաների դեմ, որոնք անձնվիրաբար պայքարում են իսկական առաջադիմության համար, բուն բարօրության համար։

Այժմ ռեակցիոն սոցիոլոգիայի առջև խնդիր է դրված՝ իդեոլոգիապես պայքարել մասսաների այդ շարժման դեմ, սևացնել պատմական մատերիալիզմի մարքսիստական թեորիան, աշխատավորների գիտակցության մեջ արմատավորել հասարակության վերաբերյալ իդեալիստական և կոնտրռևոլյուցիոն, ռեակցիոն թեորիաներ, արատավորել ռևոլյուցիոն եղանակով կապիտալիստական հասարակությունը տապալելու գաղափարը և մասսաներին համոզել, որ արտադրության կապիտալիստական եղանակը «հավիտենական» է ու «անսասան»։

Իմպերիալիստական բուրժուազիան հատուկ ապարատ է ստեղծել իր առջև լակեյություն անող սոցիոլոգներից, որոնք իզուր փորձում են հերքել հասարակության մարքսիստական մատերիալիստական թեորիան, զրպարտում են Սովետական Միությունը, ժողովրդական դեմոկրատիայի երկրները, խաղաղության լագերը, լուտանք են թափում կոմունիստների վրա, հասարակության պրոգրեսի համար մարտնչողների վրա։

---

[1] Լաֆարգ, Կարլ Մարքսի տնտեսական դետերմինիզմը, Մոսկվա, 1928 (ռուս.) հրատ., էջ 24։

Գլխավոր, կենտրոնական շարժառիթը, որից ելնում է իմպերիալիստական բուրժուազիան իր սոցիոլոգիան կառուցելիս, հասարակության մարքսիստական թեորիայի դեմ ուղղված պայքարն է։ Բուրժուազիայի ամբողջ իդեոլոգիական մեքենան օգտագործվում է հասարակության վերաբերյալ մարքսիստական-լենինյան գիտության դեմ, ամբողջ մարքսիստական-լենինյան փիլիսոփայության դեմ պայքարելու համար։ Քանի ավելի են ուժեղանում ՍՍՌՄ և ժողովրդական դեմոկրատիայի երկրները, քանի ավելի է զորեղանում դեմոկրատիայի և խաղաղության ճակատը, այնքան ավելի ագրեսիվ, սանձարձակ է դառնում այդ պայքարը, ավելի ու ավելի այլանդակ ձևեր ընդունում, դառնում անտրամաբանական, անբանական ու ստոր՝ իր գործողության մեթոդներով, նողկալի ու հակաժողովրդական՝ իր թեորիական մտահղացումներով։

Վերածնելով հին, սուբյեկտիվ սոցիոլոգիայի ռեակցիոն դաղափարուկները, արդի ռեակցիոներները ընդունում են սոցիոլոգիական մտքի «նորարարների», սոցիալական գիտության «ստեղծողների» կերպարանք։ «Ինքը գիտությունը դեռ մանկական հասակից դուրս չի եկել»,—ասել է Դյուին,—իսկ հասարակության վերաբերյալ գիտություն գոյություն չունի նույնիսկ «տհաս վիճակում», այսինքն՝ բնավ գոյություն չունի»։ «Մեր օրերին,— շարունակում է այդ մոլի ռեակցիոները,— սոցիալական հարցերը նրանց ուսումնասիրման արդյունավետության տեսակետից, գտնվում են մոտավորապես նույն դրության մեջ, որի մեջ գտնվում էին երեք հարյուր տարի առաջ բնագիտության հարցերը։ Հասունացել է հաստատված մեթոդների և օրինակների հետևողական, բազմակողմանի քննադատության անհրաժեշտությունը, համարձակ հիպոթեզների նույնպիսի նախագծման անհրաժեշտությունը, ինչպես այն նախագծումը, որը ընդամենը դեռ մի քանի հարյուրամյակ առաջ ռևոլյուցիայի հանգեց բնագիտության բնագավառում»։ Չի կարելի տարակուսել, որ հասարակության գիտական թեորիայի վերաբերյալ Դյուիի նիհիլիզմի նպատակն է «օրենքից դուրս» հայտարարել պատմական մատերիալիզմի մարքսիստական թեորիան, նսեմացնել նրա մեծագույն նշանակությունը, մերժել այն ռևոլյուցիան, որն իրականացրեց պատմական մատերիալիզմի թեորիան հասարակության վերաբերյալ գիտության ասպարեզում։

Ժամանակակից իմպերիալիզմի ռեակցիոն սոցիոլոգները՝ Դյուին և ուրիշները, փորձել են և փորձում են խաբեբայության ու զրպարտությունների միջոցով ի չիք դարձնել մարդկային մտքի այն մեծագույն սխրագործությունը, որը կատարեցին պրոլետարական պարտիայի հիմնադիրներ Մարքսն ու Էնգելսը, այդ բնագավառը ներկայացնել որպես անապատ, իսկ իրենց՝ որպես «նոր» գիտության հիմնադիրներ։ Դյուին նույնիսկ իրեն հռչակեց հասարակության գիտական թեորիայի հիմնադիր և քիչ ջանք ու ճիգ չգործադրեց ապացուցելու, որ հատկապես պրագմատիկ սոցիոլոգիան նոր գիտության սկիզբն է դրել։

Պրագմատիզմը, նրա կարծիքով, մարդկանց համար ղեկավար դաղափարներ, պլաններ ու գործողություններ մշակող «ինտելեկտուալ հաստատություն» է։

Այս է այդ ռեակցիոն թեորիայի մեծադղորդ ռեկլամը։ Սակայն բավական է մի կողմ քաշել այդ քողը և մեր առջև իրենց ամբողջ նողկալիությամբ ու մերկությամբ կկանգնեն Բերկլիի, Կոնտի, Սպենսերի, Մախի, Ավենարիուսի, Բլայի, Բերգսոնի և ուրիշների ռեակցիոն դաղափարուկները։

Խեղաթյուրելով մարքսիստական-լենինյան փիլիսոփայության, մանավանդ

պատմական մատերիալիզմի թեորիայի հիմնական սկզբունքները, զրպարտելով գիտական կոմունիզմի թեորիայի մեծ հիմնադիրներին, վերաքննության ենթարկելով և ժխտելով մարքսիզմը երկրորդ ինտերնացիոնալի առաջնորդների ոգով, լուտանքներ թափելով մարքսիզմի վրա գերմանական ֆաշիստների ոգով, ամեն գույնի ռեակցիոներներ, աջ սոցիալիստների հետ միաձայն, նրանք փորձում են հասարակության մարքսիստական-լենինյան թեորիան իջեցնել հասարակության և ընդհանրապես առաջադիմության վերաբերյալ օպորտունիստական շաղակրատության մակարդակին, մարքսիզմը դարձնել բուրժուական քաղքենիական թեորիայի մի ենթատեսակը, կամ բոլորովին հերքել այն։

Հասարակության մարքսիստական թեորիայի մեծ հաղթանակը ՍՍՌՄ-ում, ժողովրդական դեմոկրատիայի երկրներում, Չինաստանում, որտեղ կոմունիզմի միլիոնավոր մարտիկներ ոգևորված են մարքսիզմ-լենինիզմի ամենահաղթ գաղափարներով, առաջավոր մարդկանց նորանոր ջոկատների նվաճումը խաղաղության և դեմոկրատիայի մարտիկների կողմը, է՛լ ավելի սրում և կատաղի են դարձնում իդեոլոգիական պայքարը։

Կոմունիզմի կառուցումը ՍՍՌՄ-ում և սոցիալիզմի կառուցումը ժողովրդական դեմոկրատիայի երկրներում, կոմունիստական շարժման աննախընթաց աճը ամբողջ աշխարհում, երկյուղ է ներշնչում ռեակցիոներներին և շփոթություն է առաջացնում նրանց մեջ, որովհետև Սովետական Միությունում և ժողովրդական դեմոկրատիայի երկրներում մարքսիզմի ձեռք բերած պատմական մեծ հաղթանակների փաստը ցույց է տալիս մարքսիստական փիլիսոփայության հնացած լինելու մասին, բուրժուական «թեորիայի» ամբողջ գաղափարական դատարկությունն ու անմտությունը։

Ժողովրդին հոգեպես ապականելու նպատակով. բուրժուազիան իդեոլոգիական պայքարի շուկան է հանում իդեոլոգիական պայքարի բոլոր նողկալի և բարոյազուրկ թեորիաները՝ կոսմոպոլիտիզմը, ռասիզմը, կրոնա-կղերական հերյուրանքները, մալթուսականությունը և այլն։ Բուրժուազիան ձգտում է հոգեպես խեղել ժողովրդին, որպեսզի նրան անընդունակ դարձնի ընկալելու մարքսիզմ-լենինիզմի ռևոլյուցիոն գաղափարները, ձգտում է թունավորել մասսաների գիտակցությունը, դարձնել նրանց բարոյազուրկ, ոտնտարբեր դեպի քաղաքական կյանքը։ Ժողովրդին բարոյազրկելու փորձերը կազմում են կոմունիզմի դեմ ռեակցիայի մղած իդեոլոգիական պայքարի կենտրոնական կետը։

* *

Բուրժուական սոցիոլոգիայի բնորոշ գծերից մեկն է նրա խոր էկլեկտիզմը։ Իր դասակարգային սահմանափակվածությամբ զուրկ լինելով հասարակության գիտական, մոնիստական թեորիա ստեղծելու հնարավորությունից, նիրկայումբս, ինչպես և առաջ, բուրժուազիան քարոզում է խորապես էկլեկտիկ թեորիաներ, որպես ռեակցիայի իդեոլոգիական զենքի առավել ճկուն ձևերը։

Հասարակության մոնիստական թեորիա ստեղծելու ուղղությամբ բուրժուական սոցիոլոգների կատարած բոլոր փորձերը շարունակ վիժել են, որովհետև մոնիստական սոցիոլոգիան չէր կարող համապատասխանել ոչ բուրժուական դասակարգի ոգուն, ոչ էլ բուրժուազիայի քաղաքական հաստատությունների պահանջներին։

Իսկ էկլեկտիկ սոցիոլոգիան լիովին համապատասխանում էր և համապատասխանում է բուրժուազիայի քաղաքական շահերին։ Բուրժուական սոցիո-

լոգիայի էկլեկտիզմը ամբողջովին բխում է կապիտալիստական հասարակության տնտեսական, քաղաքական և դասակարգային կառուցվածքից։ Սակայն բուրժուական սոցիոլոգիայի էկլեկտիզմը, ամբողջովին վերցրած, չի կարելի շփոթել այս կամ այն բուրժուական սոցիոլոգի՝ առանձին փիլիսոփայական ու սոցիալական սիստեմի էկլեկտիկայի հետ։ Եթե բուրժուական մտածողների առանձին էկլեկտիկ սիստեմները կրել են և կրում են անցումնային բնույթ, առաջ են գալիս, կատարում են իրենց դերը բուրժուական հասարակության զարգացման որոշ փուլում, և ապա, ապրելով իրենց դարը, անհետանում են բուրժուական իդեոլոգիայի ասպարեզից, ապա ամբողջ բուրժուական սոցիոլոգիայի էկլեկտիկությունը մնում է որպես մշտապես գործող իդեոլոգիական ձև կապիտալիզմի զարգացման բոլոր էտապներում։ Էկլեկտիզմը հանդիսանում է բուրժուական սոցիոլոգիայի և բուրժուական ամբողջ վերնաշենքի անբաժանելի ու գլխավոր առանձնահատկությունը։ Բուրժուական սոցիոլոգիայի էկլեկտիզմը ի մի է շաղկապում բուրժուական սոցիոլոգիայի բոլոր տարբերատեսակները, դրանք համակարգում է որպես մի ընդհանուր սիստեմ, որն ընդունակ լինի կատարելու իր սոցիալական դերը։

Բուրժուական սոցիոլոգիայի դպրոցների բոլոր տարատեսակները, թեկուզ արտաքուստ դրանք իրար հակադիր լինեն, բուրժուական ամբողջ սոցիոլոգիայի էկլեկտիզմի շնորհիվ, իրենց տեղն ու գործադրությունն են գտնում իմպերիալիզմի իդեոլոգիայի ընդհանուր սիստեմում։ Նրանք ոչ միայն հակասության մեջ չեն մտնում կապիտալիստական հասարակության շահերի և ձգտումների հետ, այլ, ընդհակառակը, նրանցից ամեն մեկն իր ձևով լուծում է տիրապետող դասակարգի կողմից այդ դպրոցների առջև դրված իդեոլոգիական որոշ խնդիրներ։

Հօգուտ բուրժուական սոցիոլոգիայի ունիֆիկացման, հօգուտ հասարակության «գիտական», «մոնիստական» թեորիայի առանձին բուրժուական սոցիոլոգների ունեցած բոլոր երևույթները հանդիսանում են նրանց թեորիաների հակագիտական, հակասոցիալական բովանդակությունը քողարկելու ձևերը միայն։

Բուրժուազիայի համար բնորոշ է քողարկվել գիտության, հումանիզմի անունով։ Իսկ իրականում նա խորապես թշնամի է ինչպես գիտությանը, այնպես էլ հումանիզմին։ Ընդսմին որքան ավելի է հեռանում բուրժուազիան գիտության և հումանիզմի հողից, այնքան ավելի նրա փիլիսոփայությունը էկլեկտիկ ու անհեթեթ է դառնում, այնքան ավելի է աղաղակում նա բուրժուական սոցիոլոգիան ունիֆիկացնելու մասին, այնքան ավելի եռանդուն հանդես է գալիս գիտության անունից։ Այդ տեսակետից բնորոշ է բուրժուական ամենատարածված ու ազդեցիկ և միաժամանակ ամենաէկլեկտիկ սոցիոլոգիական դպրոցը, այսպես կոչված պրագմատիզմը։ Ժամանակակից գիտությունը էկլեկտիկացնելու, բուրժուական սոցիոլոգիան ունիֆիկացնելու շուրջը ոչ ոք այնքան չի աղմըկել, որքան «պրագմատիզմի» լիդեր Դյուին և «տրամաբանական պոզիտիվիզմի» լիդեր Ռասսելը, սակայն պարադոքսալ է այն, որ հենց նրանց փիլիսոփայությունը, ինչպես ուրիշ ոչ մեկինը, խորապես էկլեկտիկ ու հակագիտական է։ Ընդորում Դյուիի և Ռասսելի անհեթեթ-էկլեկտիկ, ֆիդեիստական և հակաժողովրդական փիլիսոփայության ու սոցիոլոգիայի մեջ մարմնավորված են ժամանակակից բուրժուազիայի սոցիոլոգիայի և փիլիսոփայության համարյա բոլոր հիմնական գծերը։ Հատկապես դրանով է բացատրվում այն, որ Դյուիի

և Ռասսելի այդ թեորիաները, որոնք իրար չեն հակասում, այլ միայն լրացնում են, ամենից ավելի տարածվածն ու ազդեցիկն են կապիտալիստական հասարակության մեջ։ Հենց դրանով է բացատրվում այն, որ մարդկության այդ ոխերիմ թշնամիների փիլիսոփայական և սոցիոլոգիական թեորիաները ներկայումս ֆաշիստական տարրերը բարձրացնում են ամերիկա-անգլիական իմպերիալիզմի պետական իդեոլոգիայի աստիճանին։

Դյուին և Ռասսելը փորձում են իրենց թեորիաները խաբեբայաբար ներկայացնել հասարակությանը, որպես փիլիսոփայության ինչ որ «երրորդ գիծ», որն իբր հաղթահարում է ինչպես մատերիալիզմի, այնպես էլ իդեալիզմի «միակողմանիությունը»։

Սոցիոլոգիայի այդ «երրորդ» միջին գծի կողմնակիցները գիտության և քաղաքակրթության ամենավտանգավոր թշնամիներն են, աշխատավոր մասսաների նենգ թշնամիները, մարքսիզմի և հասարակության առաջավոր մտքի նողկալի թշնամիները։ Ռեակցիա հանդիսանալով գիտության դեմ, աշխատավորների դեմոկրատական ձգտումների դեմ, այդ դպրոցները փորձում են խորապես քողարկել իրենց դիտավորություններն ու նպատակները։ Նրանք հանդես են գալիս գիտության և բանականության անունից, խոսում են սոցիոլոգիայի մեծ խնդիրների մասին, իրականում լինելով հասարակության վերաբերյալ գիտական թեորիայի ոխերիմ թշնամիները։

Մերկացնելով փիլիսոփայության այսպես կոչված միջին գծի ռեակցիոն էությունը, Վ. Ի. Լենինը ջախջախիչ քննադատության է ենթարկում այն, բերելով Դիցգենի հետևյալ խոսքերը՝ «Բոլոր պարտիաներից... ամենանողկալին միջին պարտիան է... Ինչպես որ քաղաքականության մեջ պարտիաներն ավելի ու ավելի խմբավորվում են միայն երկու լագերում... այնպես էլ գիտությունը բաժանվում է երկու հիմնական դասակարգի (generalklassen), այնտեղ մետաֆիզիկներն են, այստեղ ֆիզիկոսներն ու մատերիալիստները *։ Միջակա տարրերն ու հաշտվողական շաղատաններն ամեն տեսակի մականուններով՝ սպիրիտուալիստները, սենսուալիստները, ռեալիստները և այլն, և այլն, իրենց ճանապարհին ընկնում են մերթ մեկ, մերթ մյուս հոսանքի մեջ»[1]։

Փիլիսոփայության հիմնական ուղղություններից՝ մատերիալիզմից և իդեալիզմից, ավելի վեր բարձրանալու ձգտումը ներկայումս նույնքան մոդայական է, որքան կես դար առաջ։ Մերկացնելով տապալման դատապարտված այդ փորձերը, Վ. Ի. Լենինը դեռ 20-րդ դարի սկզբներին գրել է՝ «Փիլիսոփայության այս երկու արմատական ուղղություններից դուրս ցատկելու փորձերն իրենց մեջ չեն պարունակում ոչինչ, բացի «հաշտվողական շաղատանությունից»[2]։ Այսպես կոչված միջակա պարտիայի լենինյան քննադատությունը այսօր ևս չի կորցրել իր նշանակությունը և շեշտակի հարված է հասցնում «երրորդ գծի» ժամանակակից ներկայացուցիչներին։

Սոցիոլոգիայի ասպարեզում հաշտվողական խաբեբաների առավելությունը մյուս ռեակցիոն սոցիոլոգիական դպրոցներից միայն ձևի մեջ է։ Այդ հաշտվողականների սոցիոլոգիայի բովանդակությունը, նպատակասլացությունը, գլխավոր խնդիրը նույնն են, ինչ որ հասարակության վերաբերյալ մյուս ռեակցիոն թեորիաներում։

* Դիցգենի այս խոսքերի կապակցությամբ, Վ. Ի. Լենինը նկատում է՝ «...Մետաֆիզիկներ» ասելու փոխարեն պետք էր ասել «իդեալիստներ»։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 455—456։

[2] Նույն տեղում, էջ 456։

«Օբյեկտիվիզմի», «հումանիզմի» և «անպարտիականության» դիմակի տակ թաքնված է նրանց ամենառազմատենչ պարտիականությունը։ Փիլիսոփայության «երրորդ» գիծը բնորոշվում է կապիտալիստական հասարակության ամենառեակցիոն դասակարգերի պաշտպանությամբ, աշխատավոր մասսաների լայն խավերի պրոգրեսիվ շարժման հանդեպ ցուցաբերվող թշնամանքով, գաղանային ատելությամբ դեպի Սովետական Միությունը և ժողովրդական դեմոկրատիայի երկրները, դեպի մարքսիզմ-լենինիզմը։

Փիլիսոփայության այդ «երրորդ» գիծը ոչ այլ ինչ է, եթե ոչ մախիզմ արդի սոցիոլոգիայում։

Մախիստների «Սոցիոլոգիական դատարկաբանություններ», Լենինի արտահայտությամբ, ոչ այլ ինչ են, եթե ոչ Ես-ի սոցիոլոգիայի անչափ ընդլայնացում, այսինքն սուբյեկտիվ սոցիոլոգիայի շրջանակների ընդլայնում, սոցիոլոգիա, որտեղ կարող են հանգիստ գոյակցել «թե՛ իդեալիզմը, թե՛ մետաֆիզիկան, թե՛ օկկուլտիզմը, թե՛ սոլիպսիզմը, թե՛ էգոիզմը»[1]։

Այսպիսով, մախիստական սոցիոլոգիան մի հայելի է, որն արտացոլում է ոչ միայն էմպիրիոկրիտիցիզմի սուբյեկտիվ սոցիոլոգիայի տենդենցները, այլև իմպերիալիզմի դարաշրջանի ռեակցիոն բուրժուական սոցիոլոգիայի հիմնական տենդենցները։

«Քաղքենու անսահման բթամտությունը,—գրում է Վ. Ի. Լենինը,—քաղքենի, որը ինքնագոհությամբ հրամցնում է ամենածամծմված խլամ, քողարկելով այն «նոր», «էմպիրիոկրիտիկական» սիստեմավորումով ու տերմինաբանությամբ,... Բառակամ աչքակապությունների հավակնոտ զգեստ, սիլլոգիստիկայի բոնազբոսիկ խորամանկամտություններ, նրբին սխոլաստիկա...»[2]։

Սրանք են մախիզմի հիմնական գծերը։ Լենինի այս անմահ խոսքերը, որոնք ուղղված են էմպիրիոկրիտիցիզմի հասցեին, արտացոլում են բուրժուական ամբողջ ռեակցիոն փիլիսոփայության և սոցիոլոգիայի ժամանակակից էտապի էությունը։

* * *

Արդի բուրժուական սոցիոլոգիան խորացրեց և ծայրահեղ աստիճանի հասցրեց հին իդեալիստական բուրժուական փիլիսոփայության ու սոցիոլոգիայի հակաժողովրդական գծերը։ Բայց չնայած դրան, բուրժուական թեորետիկոսները ամենաանամոթ կերպով, նողկալի կեղծավորությամբ գրում և աղմրկում են «հումանիզմի» մասին, մարդու, ժողովրդի երջանկության մասին, կուլտուրան և քաղաքակրթությունը «վերահաս կործանումից փրկելու» մասին։ 18-րդ դարի բուրժուական ռևոլյուցիայի «հավասարություն, եղբայրություն և ազատություն» լոզունգը ռեակցիոն սոցիոլոգիայի ասպարեզից չի իջնում։ Այդ սոցիոլոգիան իզուր է ջանում անգլո-ամերիկյան «դեմոկրատիայի» գույնով ներկված ֆաշիստական կարգերը պատկերել որպես «մարդկության հավիտենական իդեալների» իրականացումը։ Իրոք, բուրժուական բոլոր սոցիոլոգիական թեորիաները ուղղված են ժողովրդի բարօրության դեմ, աշխատավոր մասսաների դեմ, նրանց կուլտուրական և քաղաքական աճման, նրանց տնտեսական ու քաղաքական շահերի դեմ և ձգտում են քաղաքական ու հոգևոր լիա-

[1] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 14, էջ 430։
[2] Նույն տեղում, էջ 431։

կատար ստրկացման ենթարկել մարդկությունը՝ հանուն մոնոպոլիստների առավելագույն շահույթների ապահովման։

Եվ դա հասկանալի է, որովհետև անձնավորության իրավունքները, ինչպես նշել է Ի. Վ. Ստալինը, այժմ ճանաչվում է միայն նրանց համար, ովքեր կապիտալ ունեն, իսկ մյուս քաղաքացիները համարվում են միայն շահագործման համար պիտանի մարդկային հում նյութ։

Եվրոպայի և Ամերիկայի ժամանակակից բուրժուական սոցիոլոգիայի բնորոշ գծերից մեկն է «ամերիկյան ապրելակերպի», ամերիկյան ստանդարտի պրոպագանդան, որն իբր կյանքի պարտադիր ու անխուսափելի ձևն է երկրագնդի բոլոր ժողովուրդների համար։ Կոսմոպոլիտիզմի, այսինքն ամերիկյան իմպերիալիզմի համաշխարհային տիրապետությունը հաստատելու գաղափարի պրոպագանդան հանդիսանում է Ամերիկայի և Եվրոպայի ռեակցիոն սոցիոլոգիական թեորիաների գլխավոր առանձնահատկությունը։

Ամերիկյան տնտեսական, քաղաքական, իդեոլոգիական և հոգևոր ստանդարտը հաստատելու համար, ամեն դույնի ռեակցիոներներ, և նրանց հետ միասին նաև ռեակցիոն փիլիսոփաներն ու սոցիոլոգները տարածում են «ամերիկյան ապրելակերպի», ամերիկյան «դեմոկրատիայի», ամերիկյան հասարակական և պետական սիստեմի կարծեցյալ առավելությունների առասպելը։

Ամերիկյան բիզնեսմենները համաշխարհային գրքի շուկան հեղեղել են սոցիոլոգիական գրքերով, թերթերով ու ժուռնալներով, որոնց մեջ ամերիկյան տնտեսական և հոգևոր ստանդարտը հրամցվում է որպես մարդկության «վերջնական» իդեալը։ Ռադիոն, թատրոնը, կինոն, արվեստը, գրականությունը գովերգում են այդ գաղափարը։

Ամերիկյան միլիարդատերերին ծառայող փիլիսոփաներն ու սոցիոլոգները բազմապիսի առասպելներ են հնարում ամերիկյան պետության մասին, ամերիկյան կոլտուրայի, ամերիկյան ազգի, ամերիկյան ֆերմերների մասին, ամերիկյան «բարեպաշտ» և «աստվածավախ» կապիտալիստների մասին, իբր «ռևոլյուցիան և սոցիալիզմը մերժող» ամերիկյան բանվորների մասին, գործազրկության բացակայության մասին։

Այդ փիլիսոփաները և սոցիոլոգները, միասնական լագեր կազմելով ամբողջ ռեակցիայի հետ, փիլիսոփայական և սոցիոլոգիական խորամանկամտությունների, ստի ու խաբեբայության միջոցով փորձում են որպես իսկական ազատություն ներկայացնել շահագործման և ճնշման առավել լկտի ձևերը, իմպերիալիստական դիկտատուրայի առավել նողկալի եղանակները, իսկ բուն ազատությունը ցեխի մեջ են տրորում։

Ընդսմին նրանք լռության են մատնում Ամերիկայում տիրող աղքատությունը. ԱՄՆ-ի մեծ քաղաքներում գոյություն ունեցող հետնախորշերը, լռություն են պահպանում տասը միլիոն գործազուրկների մասին, ամերիկյան ֆերմերների տնտեսական քայքայման մասին, 15 միլիոն նեգրերին փաստորեն տարրական քաղաքացիական իրավունքներից զրկելու և խտրականության ենթարկելու մասին, ամերիկյան կանանց իրավազուրկ դրության, անչափահասների աշխատանքի շահագործման մասին, Կու-Կլուքս-Կլանի, «սև լեգեոնի», «արծաթավուն շապիկների», քրիստոնեական ճակատի և ֆաշիստական այլ կազմակերպությունների նողկալի «սխրագործությունների» մասին, որոնք ազատորեն գործում են Ամերիկայում։ Նրանք քողարկված ձևով կամ բացահայտորեն բոլոր ուժերով և միջոցներով արդարացնում են սպառազինությունների

տենդային մրցավազքը. Ամերիկայի ռազմականացումը, համաշխարհային երրորդ պատերազմի նախապատրաստումը։ Նրանք սոփեստությամբ և աչքակապությամբ քողարկում են հակաժողովրդական բնույթի այն օրենքները, որոնք ուղղված են բանվորների և ամերիկյան ժողովրդի ազատության դեմ, ամերիկյան կոմունիստների դեմ։ Նրանք ամեն կերպ արդարացնում են այն գաղանությունները, որոնք կատարել են ամերիկյան բարբարոսները Կոչժեգոյում, ամբողջ Կորեայում և շարունակում են կատարել Եվրոպայում ու Ասիայի երկրներում։ Վերջապես, նրանք լռության են մատնում մի բուռն մոնոպոլիստների հրեշավոր հարստացումը և ամերիկյան ժողովրդի տնտեսական ու քաղաքական դրության աղետալի վատթարացումը։

Ներկայումս ռեակցիոն սոցիոլոգները մշակում են ամբողջ աշխարհում ամերիկյան «ստանդարտ» հաստատելու ձևերն ու մեթոդները։

Այդ «համաշխարհային ստանդարտի» իրականացմանը հասնելու համար, ռեակցիոն սոցիոլոգները պահանջում են նախ և առաջ «կազմակերպել մարդկանց մտքերն ու զգացմունքները ամերիկյան օրինակով»։ Ատոմային դարը,— ասում է «համաշխարհային ստանդարտի» թեորիայի գլխավոր պաշտպաններից մեկը՝ Բոգարդուսը,— անհրաժեշտ դարձրեց, որ մարդիկ ընդլայնեն իրենց հասկացողությունները գավառականից ու ազգայինից մինչև կոսմոպոլիտիզմը»։

Իմպերիալիզմի այդ սոցիոլոգը հանդես գալով ազգերի ազատության դեմ, առաջարկում է նրանց նկատմամբ կիրառել ամերիկյան ստանդարտը՝ հաստատել պարտադիր վերահսկողություն «հասարակական կարծիքի նկատմամբ»։

Հասարակական կարծիքի նկատմամբ վերահսկողություն սահմանելը այսպես ասած համաշխարհային ստանդարտ հաստատելու կարևոր միջոցն է։ «Եթե առաջին երկու-երեք ատոմային ռումբերի արտադրությունը արժի երկու բիլիոն դոլար,— ասում է նա,— ապա համաշխարհային հասարակությունը պաշտպանող ողու զարգացման համար կարող է պահանջվել 200 բիլիոն»։

Ամերիկյան իմպերիալիզմի այդ նողկալի լակեյը խորհուրդ է տալիս նախքան համաշխարհային ստանդարտ ստեղծելը, այսինքն՝ ժողովուրդների վզին «ամերիկյան ապրելակերպ» փաթաթելը, կազմակերպել հատուկ «սոցիալական լաբորատորիաներ», որտեղ ստանդարտներ մշակվեն ընտանիքի, ամուսնության, անհատների կյանքի կազմակերպման համար, դաստիարակության, կրթության, սովորությունների բարոյականության, էտիկայի համար։ Այդ բոլոր ստանդարտները, Բոգարդուսի կարծիքով, ավելի լավ է արմատավորվել մարդկանց կյանքի մեջ փոքր հասակից, դպրոցական սեղանից, ներգործելով ոչ թե մարդկանց գիտակցության, այլ նրանց բնազդների վրա, որովհետև «բնազդն առաջ է տանում, իսկ գիտակցությունը հետևում է նրան»։

Ընթանալով Բոգարդուսի հետքերով, ավելի երիտասարդ սերնդի սոցիոլոգ Գրեխեմ Ուոլլեսը պահանջում է Ամերիկայում գերմանական ֆաշիստների օրինակով գործադրել «կամքի կազմակերպումը և մտքի կազմակերպումը»։

Նույն այդ հակաժողովրդական, կոսմոպոլիտական զազրելի գաղափարներն էր զարգացնում Սովետական Միության մոլի թշնամի, համաշխարհային նոր պատերազմի հրձիգ, ռեակցիոներ Ջորջ Էլիոտ Հովարդը։ Դեռ 1918 թվականին ամերիկյան սոցիոլոգների խորհրդակցությանը զեկուցում տալով «Իդեալները որպես գործոն ինտերնացիոնալ հասարակության ապագա վերահսկողության ասպարեզում» թեմայով, նա ասել էր, որ «ազգային պետության իդե-

այները անբարոյական են» և զարգացնում էր «օտարերկրացիների համար միջազգային բարոյականության ստանդարտներ» ստեղծելու գաղափարը։ Մինչև այժմ էլ փայփայվում են Հովարդի այդ նողկալի իդեալները։

Բուրժուական սոցիոլոգիայում Ամերիկայի համաշխարհային տիրապետությունը հաստատելու պրոպագանդայի այդ գիծը, ներկայումս Եվրոպայում և Ամերիկայում տիրող ոստիկանական ռեժիմի ազդեցությամբ, չափազանց տարածված է և ուղղված է կոմունիստական ինտերնացիոնալիզմի դեմ։

«Ամերիկյան ապրելակերպի» այդ քարոզը իր մոլի պաշտպաններն է դրսևորում մարշալականացված երկրների ռեակցիոն սոցիոլոգների մեջ։

Ամերիկյան մոնոպոլիստների գաղութարար նպատակները սքողելու և եվրոպական ժողովուրդների այդ կողոպտիչներին որպես Եվրոպայի «փրկիչներ» պատկերելու, մարշալականացված երկրների բուրժուազիայի ազգային դավաճանությունը արդարացնելու նպատակով, սոցիոլոգիայի ասպարեզում ամերիկյան բարբարոսների եվրոպական լակեյները ֆրազյորության, բառախաղի միջոցով քիչ փորձեր չեն անում «նոր» թեորիաներ ստեղծելու համար, որոնց համաձայն անխուսափելի է Եվրոպայի ենթարկումը ամերիկյան ստանդարտին, ամերիկյան ապրելակերպին, այսինքն՝ իբր անխուսափելի է Արևմտյան Եվրոպայի և կապիտալիստական այլ երկրների տնտեսական ու քաղաքական ենթարկումը Ամերիկային։

Ներկայումս ամերիկյան մոնոպոլիստների մոտ ծառայության մեջ են գտնվում ինչպես Վատիկանը, այնպես էլ աջ սոցիալիստների դավաճան պարտիայի լիդերները, այդ թվում Բերտրան Ռասսելը, ֆրանսիական սև հարյուրյակային, ակադեմիկոս Մարիլո Լուին, Ժակ Մարիտենը և այլ ռեակցիոներներ։ Նրանք Դյուիի, Բոգարդուսի և Ռասսելի հետ միաձայն պնդում են, թե փրկությունը միմիայն անգլո-սաքսոնական «քաղաքակրթության» զարգացման ու տարածման մեջ է, ամերիկյան իմպերիալիզմի համաշխարհային տիրապետության մեջ։ Ընդհանին այդ խավարամոլները աշխատում են համոզել իրենց հայրենակիցներին, որ նրանք հնազանդվեն ճակատագրին և անվերապահորեն ընդունեն ամերիկյան «նոր» քաղաքակրթությունը, որպես պատմականորեն անխուսափելի։

«Պատմության օրենքը,— ասում է ֆրանսիական ժողովրդի հայտնի դավաճան Մարիլո Լուին, որը բավականաչափ հաստատված է փաստերով, այն է, որ բնակչության զարգացումն ընթանում է քաղաքակրթության կորագծին զուգահեռ կորագծով»։

«Քաղաքակրթության կորագծին զուգահեռ» բնակչության զարգանալու թեորիան, որը դովերգում էր դեռ ֆաշիստական փիլիսոփա Շպենգլերը, ոչ այլ ինչ է, եթե ոչ մի փորձ, որով ջանում են «գիտականորեն» մերժել արտադրության կապիտալիստական եղանակի խորտակման անխուսափելիության մարքսիստական թեորիան և փորձում են ապացուցել, որ կապիտալիզմի զարգացումը կարող է ընթանալ իբր այնպիսի պայմաններում, երբ առանձին երկրներում կարող է գոյություն ունենալ կապիտալիզմի անշարժություն, նույնիսկ հետադիմություն, իսկ մյուս երկրներում միևնույն ժամանակ կապիտալիզմը կարող է ծաղկել։ Այլ խոսքով, այդ «թեորիան» քարոզում է, թե ամերիկյան կապիտալիզմի զարգացումը բացառիկ բնույթ ունի, թե նա զարգանում է առանց ճգնաժամերի ու գերարտադրության, առանց նեխման ու քայքայման ընդհանուր տենդենցի։

Այդ «թեորիայի» կողմնակիցները փորձում են համոզել իրենց ընթերցողներին, թե Եվրոպայի դարը հասել է իր պատմական վախճանին, թե Եվրոպան դատապարտված է կործանման և ապագան պատմական անխուսափելիությամբ պատկանում է կապիտալիստական Ամերիկային։

Նույն գաղափարներն է պաշտպանում Եվրոպայի ժողովուրդների ոչ պակաս թշնամի, քրիստոնեական փիլիսոփա Ժակ Մարիտենը։

«Եվրոպան,— գրում է նա իր «Արդարացիություն» աշխատության մեջ,— անընդունակ գտնվեց իրեն փրկելու։ Այժմ նա ամբողջ աշխարհում նոր լույսի կարիք ունի, որպեսզի խուսափի մահից և ստրկացումից»։ Եվրոպայի ժողովուրդներին (այսինքն՝ եվրոպական կապիտալիզմը) «փրկելու» միսիան Մարիտենը համարում է ԱՄՆ-ի համաշխարհային տիրապետության հաստատումը։ Այդ նպատակով նա եվրոպական ժողովուրդներից պահանջում է հրաժարվել «պլյուրալիստական» տեսակետից, այսինքն՝ ազգային պետությունների անհրաժեշտության տեսակետից։ «Անհրաժեշտ է ցենտրիզմ և ոչ թե պլյուրալիզմ» հռչակում է ամերիկյան իմպերիալիզմի այդ լակեյը։

Այդ թեորիական հնարանքների ամբողջ իմաստն է՝ ստեղծել ռեակցիոներների միասնական ճակատ, նպատակ դնելով կազմակերպել նոր խաչակրաց արշավանք Եվրոպայի և Ամերիկայի ժողովուրդների ռևոլյուցիոն շարժման դեմ, ՍՍՌՄ-ի և ժողովրդական դեմոկրատիայի երկրների դեմ, գաղութային ու կիսագաղութային երկրների ազգային-ազատագրական շարժման դեմ։

Բուրժուական, մանավանդ ամերիկյան սոցիոլոգիայի «նորագույն» առանձնահատկություններից մեկն է այսպես կոչված «գործադրական սոցիոլոգիայի» կառուցումը։ Այդ «սոցիոլոգիան» առանձնապես տարածվել է Ամերիկայի ռեակցիոն շրջաններում, համաշխարհային երկրորդ պատերազմից հետո։

Այն բանից հետո, երբ Ամերիկան, որպես համաշխարհային երկրորդ պատերազմի հետևանք, մարշալականացրեց Արևմտյան Եվրոպայի և Ասիայի գլխավոր և ոչ գլխավոր կապիտալիստական պետությունները, ամերիկյան իմպերիալիզմի ռազմականացված սոցիոլոգիայի առջև առանձնապես սուր կերպով ծառացավ մի խնդիր՝ «գործնականորեն ճանաչել» և ուսումնասիրել ամերիկյան զավթիչների ազդեցության ոլորտի մեջ մտնող ժողովուրդների ու ազգերի «կյանքն ու կենցաղը», ինչպես նաև ՍՍՌՄ-ի, ժողովրդական դեմոկրատիայի երկրների և Չինաստանի ժողովուրդների ու ազգերի «կենցաղն ու տրադիցիաները»։

Իմպերիալիզմի դարաշրջանի սոցիոլոգիայի ասպարեզում կատարվող հետազոտությունների տրադիցիոն տիպերը, այսինքն՝ հասարակության վերաբերյալ լիբերալ բուրժուական թեորիաները, այլևս չէին կարող պատշաճ չափով բավարարել մոնոպոլիստական կապիտալիզմի տիրապետության նոր պայմաններին, այդ իսկ պատճառով բուրժուական տրադիցիոն սոցիոլոգիայում նկատվող դեմոկրատական որոշ տենդենցներ բոլորովին անհետացան։ «Առաջ,— ասում է ընկեր Ստալինը,— բուրժուազիան իրեն թույլ էր տալիս լիբերալություն անել, պաշտպանում էր բուրժուական-դեմոկրատական ազատությունները և դրանով իսկ իր համար մասսայականություն էր ստեղծում ժողովրդի մեջ»[1]։

Բուրժուական դեմոկրատիզմի այդ գծերը իրենց վերջնականապես սպա-

[1] Ի. Ստալին. Ճառ պարտիայի XIX համագումարում, էջ 13։

ռեցին կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի շրջանում։ Ուստի հետպատերազմյան տարիները, սոցիոլոգիայի ֆաշիզացման իմաստով, անցումնային էտապ հանդիսացան ամբողջ բուրժուական փիլիսոփայության և մանավանդ ամերիկյան սոցիոլոգիայի էվոլյուցիայում։ Ինչպես համաշխարհային երկրորդ պատերազմից առաջ ֆաշիստական Գերմանիայում, այնպես էլ ներկայումս Ամերիկայում, սոցիոլոգիական գիտության ֆաշիզացման հետևանքով, ինչպես ասում են ավելի բացահայտ ռեակցիոներները, «փոփոխություն» է կատարվել սոցիոլոգիայի արագիցիոն պրոբլեմներով զբաղվող հաստատությունների «կառուցվածքում, ֆոկուսում և դիտավորությունների մեջ»։

Տարակույս չի կարող լինել, որ սոցիոլոգիայի «ֆոկուսում» այդպիսի փոփոխություններ տեղի ունենալուց հետո, տրադիցիոն բուրժուական սոցիոլոգիայի հետքն անգամ չի մնացել։ Սոցիոլոգիան ամբողջապես դարձել է ամերիկյան իմպերիալիստների տնտեսական, քաղաքական և իդեոլոգիական ձեռնարկումների գործիք և նրա հետազոտություններն առաջին հերթին օգտագործվում են ամերիկյան ժողովրդի, ՍՍՌՄ-ի և այլ խաղաղասեր ժողովուրդների դեմ՝ ամերիկյան իմպերիալիստների համաշխարհային տիրապետությունը հաստատելու համար։

Ներկայումս Ամերիկայում ստեղծվել են սոցիոլոգիայի պրոբլեմներն ուսումնասիրող հատուկ խոշոր հետազոտական կազմակերպություններ, այսպես կոչված՝ «գործադրական սոցիոլոգիայի» հաստատություններ, որոնց նպատակն է ծառայել մոնոպոլիստական կապիտալին, նրա քաղաքականությանը, նրա կամքին։ Ամերիկյան սոցիոլոգ Ջոն Յուսիմի վկայությամբ, այդ «հետազոտիչ» կազմակերպությունների թիվն ավելացել է շնորհիվ այն բանի, որ կառավարական, ռազմական, քաղաքացիական և նույնիսկ առևտրական կազմակերպությունները տեղեկությունների, նյութերի պատվերներ են տալիս, որոնք անհրաժեշտ են քաղաքական, տնտեսական և իդեոլոգիական հերցերի շուրջը որոշումներ ընդունելու, միջազգային քաղաքականության ասպարեզում ղեկավարվելու և կողմնորոշվելու համար։

«Գործադրական սոցիոլոգիան», վերոհիշյալ Ջոն Յուսիմի ասելով, այնպիսի մի «հատուկ գիտություն» է, որ զբաղվում է «սուր պրոբլեմների», «երևույթների նոր տիպերի» հետազոտությամբ. այսինքն երկրների և պետությունների, ժողովուրդների և ազգերի ուսումնասիրությամբ, որպեսզի «անհրաժեշտ» տվյալներ հավաքի կուլտուրան և «զանազան ապրելակերպների» փոխներդործությունն ուսումնասիրելու դիմակի տակ երրորդ համաշխարհային պատերազմ նախապատրաստելու համար։

«Տիրապետության համար համաշխարհային պայքարը,— հայտարարում է ամերիկյան սոցիոլոգ Ջոն Յուսիմը,— խոստանում է պահպանել այդ կողմնորոշումը երկար տարիներ»։

Պատերազմի ամերիկյան հրձիգների աշխարհաքաղաքականության (Геополитика) «նոր» վարիանտը վերցված է գերմանական ֆաշիստների «պատմական» դինանոցից, վերանվանվել է «գործադրական սոցիոլոգիա» և դարձել է ամերիկյան իմպերիալիստների զենքը՝ այս անգամ արդեն ամերիկյան մոնոպոլիստների համաշխարհային տիրապետությունը հաստատելու համար։

Սակայն ռեակցիոն սոցիոլոգներն իրենց «հետազոտություններում» մոռանում են ուսումնասիրել դեռ վերջերս Գերմանիայում ֆաշիստների ստեղծած այդպիսի հաստատությունների պատմական փորձն ու ճակատագիրը։

Ժամանակակից բուրժուական սոցիոլոգիայի մյուս բնորոշ գիծն է հասարակական երևույթների բիոլոգիականացումը։ Բուրժուական սոցիոլոգիայի բիոլոգիզմը ծնունդ է առել դեռ բուրժուական հասարակության արշալույսին, իր լայն զարգացումն է գտել Կոնտի, Սպենսերի, Մախի, Ավենարիուսի, սոցիոլոգիայում, սոցիալ-դարվինիզմում։ Ներկայումս այդ ուղղությունը պրոպագանդում են իմպերիալիզմի դարաշրջանի ամենառեակցիոն սոցիոլոգները՝ Դյուին ու Ռասսելը, Բոգարդուսն ու Ռոսսը և ուրիշները։

Այդ սոցիալական դպրոցը հակաժողովրդական և հակագիտական ամենանողկալի նպատակներով քարոզում է բնության և հասարակության օրենքների նույնությունը, կենդանական բուսական աշխարհի օրինաչափության տիրապետությունը հասարակության կյանքում, քարոզում է անասնական վայրագ բնազդների կամայականությունը, կենդանական աշխարհում տիրող գոյության կռվի օրենքները փոխադրում է հասարակության կյանքի վրա, հռչակում է ազատ մրցակցություն, որպես հասարակական «կեցության բնական ձևը»։ Նույն դպրոցը մյուս կողմից քարոզում է դասակարգային խաղաղություն կապիտալի և աշխատանքի միջև, առաջարկում է ենթարկվել մայր-բնության «սրբազան» և «հավիտենական» օրենքներին ու «ամենաբարձրյալի» ձայնին, ժխտում է դասակարգային հակամարտությունը, պախարակում է բռնության գործադրումը ժողովրդի կողմից, քարոզում է ռեֆորմիզմի և էվոլյուցիայի մեթոդը հասարակական զարգացման մեջ, մերժում է հասարակության թռիչքաձև զարգացման թեորիան, մարքսիզմը որակում է որպես անարխիստական, «հակահասարակական», «հակամարդասիրական» թեորիա։

Հասարակական գիտության մեջ բիոլոգիզմի վառ գովերգուներից մեկը՝ Ջ. Դյուին, պահանջում է վերացնել սոցիալական մեթոդի «դուալիզմը» և «ոչընչացնել սոցիալականի ու բիոլոգիականի՝ բնության և հասարակության օրենքների հակադրությունը։ «Չկա սոցիալ-անհատական, չկա սոցիալ-յուրահատուկի տարբերություն այն բանի, ինչ մենք անվանում ենք բիոլոգիական»,— այսպես է հայտարարում գիտության այդ ոխերիմ թշնամին։

Դյուիի պրագմատիզմին ձայնակցում է տրամաբանական պոզիտիվիստ Ռասսելը։ «Մարդը կիսահրեշտակ, կիսագազան է,— ասում է մարդկության այդ թշնամին։—Ներկայումս ամենակատաղի և ամենավտանգավոր կենդանին, որի դեմ մարդը ստիպված է պայքարել, դա մարդն է»։ Այդ մարդակերական հայտարարությունների իմաստն է՝ համոզել մարդկությանը, որ պատերազմների աղբյուրը ոչ թե արտադրության կապիտալիստական եղանակի հակասություններն են, ոչ թե մոնոպոլիստների առավելագույն շահույթ ստանալու ձգտումը, այլ իրը կենդանական, բիոլոգիական բնազդները, մարդկանց երկյուղը միմյանցից։ Կատաղի պայքար մղելով հասարակական երևույթների մատերիալիստական բացատրության դեմ, Ռասսելը ցինիկաբար հայտարարում է. «Ես ինձ համար... անհնարին գտա ընդունել այն տեսակետը, որի համաձայն պատերազմի աղբյուրը էկոնոմիկան է»։ Դեռ ավելին, Ռասսելը բանը հասցնում է զառանցանքայնն այն դաղափարին, թե կենդանական երկյուղը, բնազդներն իրենք են ծնունդ տալիս տնտեսական վեճերին և սոցիալական կոնֆլիկտներին։

Փորձելով «դիտականորեն» հիմնավորել իմպերիալիստական պարագլուխների զավթողական քաղաքականությունը, նա հավատացնում է, թե ուրիշների տերիտորիաները հափշտակելու ձգտումը նույնպես «կենդանական երկյուղի հետևանք է»։

Այդպիսով, հասարակական երևույթների բիոլոգիականացման բազայի վրա, բուրժուական սոցիոլոգները փորձում են «ռևոլյուցիա» առաջացնել հասարակության սոցիոլոգիական թեորիաներում, նպատակ դնելով մերժել հասարակության մարքսիստական թեորիան, որը հասարակական պրոբլեմների մեկնաբանության բնագավառում ելնում է ոչ թե հասարակական «բիոլոգիական հիմքերից», այլ նրա տնտեսական կյանքից, նյութական կյանքի պայմաններից։

Հասարակության բիոլոգիական թեորիաների խորտակիչ քննադատությունը տվել է դեռ Վ. Ի. Լենինը «Մատերիալիզմ և էմպիրոկրիտիցիզմ» իր անմահ աշխատության մեջ։ «Կարելի՞ է արդյոք երևակայել որևէ ավելի անպտուղ, մեռյալ, սխոլաստիկ բան,— ասում է նա,— քան բիոլոգիական և էներգետիկական բառերի նմանօրինակ շարումը, բառեր, որոնք բացարձակապես ոչինչ չեն տալիս և չեն կարող տալ հասարակական գիտությունների բնագավառում»[1]։

Վ. Ի. Լենինն առանձնապես վրդովված էր նրանով, որ այդ անհեթեթությունը ներկայացվում է որպես ժամանակակից գիտություն և ապացուցում էր, որ ռեակցիոն սոցիոլոգները բնության երևույթներն ու օրենքները փոխադրում են հասարակության կյանքի վրա՝ հասարակական զարգացման մատերիալիստական թեորիայի դեմ պայքարելու նպատակով։

«Ավելի հեշտ բան չկա,— գրել է Լենինը,— քան ճգնաժամերի, ռևոլյուցիաների, դասակարգերի կռվի և այլ նման երևույթների վրա «էներգետիկական» կամ «բիոլոգա-սոցիոլոգիական» պիտակ փակցնելը, բայց չկա նույնպես ավելի անպտուղ, սխոլաստիկ, մեռյալ բան, քան այդ զբաղմունքը»[2]։

Ժամանակակից բուրժուական սոցիոլոգիայում հատուկ տեղ է գրավում հասարակության այսպես կոչված հոգեբանական թեորիան։

Այդ թեորիայի կողմնակիցներ Հենս Էլլվուդը, Էլիոտ Հովարդը և ուրիշները հասարակությունը դիտում են որպես «անհատների մի խումբ, որոնք կոլեկտիվ կյանք են վարում հոգևոր փոխներգործության միջոցով», բնազդների, հույզերի, գիտակցության ու բանականության փոխներգործության միջոցով։ Հասարակությունը, ասում են այդ դպրոցի կողմնակիցները, դա բնազդների, ներոլոգիական ռեակցիաների հոգևոր ասոցիացիան է, զգացմունքների և զգացողությունների կոմպլեքսը։ Իսկ մարդկանց միջև շփումը իրականացվում է սիմվոլների միջոցով։ Սիմվոլները և գիտակցությունը կազմում են հասարակության հիմնական տարրերը։

Հոգեբանական դպրոցի այդ տիպիկ նեոմախիստական սոցիոլոգիան խարդախում է սոցիալական պրոբլեմները, կոծկում է տնտեսական և քաղաքական այն ռեալ հարաբերությունները, որոնք կապիտալիզմի պայմաններում որոշում են հասարակության դեմքը, կազմում են մարդկային ասոցիացիայի հիմքը։

Զրպարտելով հասարակության գիտական թեորիան, այդ դպրոցի կողմնակիցները նպատակ ունեն հոգեբանական աշքակապությամբ «սոցիալական բնազդի» միջոցով, «հաղթահարել» հասարակության մարքսիստական թեորիան։ Նրանք, ինչպես և սոցիալիզմի բոլոր թշնամիները, ոռնոց են բարձրացրել, թե իբր «սոցիալիզմը սպառնում է անհատական նախաձեռնությանը և թերագնահատում է մտավոր ու բարոյական բնույթի դերը»։

Բուրժուական սոցիոլոգիայի այդ գիծը Մարքսից և Էնգելսից հետո մեր-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 438։
[2] Նույն տեղում, էջ 440։

կացրեց Վ. Ի. Լենինը, Ռլայի և Պետցոլդի մախիստական սոցիոլոգիայի քննադատության կապակցությամբ։ Նրանք, ինչպես և բոլոր ռեակցիոն բուրժուական սոցիոլոգները, զրպարտում էին մարքսիստներին, պնդելով, թե վերջիններս իբր ժխտում են անձնավորության դերը, նրա ստեղծագործական նախաձեռնությունը, նրա տեղը հասարակության մեջ, նրա շահերը, մարդուն «պատահականություն» են համարում, ենթարկելով նրան ինչ որ «իմանենտ տնտեսական օրենքների»։ «Այս փաստարկն,— ասում է Վ. Ի. Լենինը,— ամբողջությամբ կրկնում է էմպիրոկրիտիկական «սկզբունքային կոորդինացիայի», այսինքն՝ Ավենարիուսի թեորիայի իդեալիստական աչքակապության իդեաների շրջանը»[1]։

Կապիտալիստական շահագործման ու մրցակցության, աշխատավոր մասսաների լայն խավերի աղքատության ու աղետալի վիճակի պայմաններում, երբ տեղի է ունենում անձնավորության իրական ոչնչացումը, նրա բարոյական քայքայումը, երբ անձնավորության իրավունքները այժմ ճանաչվում են միայն նրանց համար, ովքեր կապիտալ ունեն, երբ մյուս քաղաքացիները համարվում են սոսկ մարդկային հում նյութ, բուրժուազիայի դիպլոմավոր լակեյները, «մեծ անձնավորության», մարդու «ազատ» նախաձեռնության առասպել ստեղծելով, փորձում են մթագնել մարդկանց գիտակցությունը, թաքցնել նրանցից իրական դրությունը, անձնավորության հեռանկարազրկությունը, նրա հոգևոր և բարոյական անկումը կապիտալիզմի պայմաններում։

Մյուս կողմից, հոգեբանական դպրոցի կողմնակիցները ամեն տեսակ տգեղ հերյուրանքներով փորձում են հասարակության լայն խավերում ստեղծել անտարբերություն և եթե հնարավոր է՝ նույնիսկ թշնամություն սոցիալիզմի հանդեպ։ «Եթե տեղի ունենա ռևոլյուցիա,— գրում է վերև հիշատակված Էլլվուդը,— այն ժամանակ շատ բան, որ արժեքավոր է հասարակական կազմակերպության մեջ, կոչնչացվի... շփոթություն կտիրի և հասարակական կյանքում կարող է հեշտությամբ վերադարձ կատարվել դեպի վայրենության ստադիան»։

Ինչպես այս, այնպես էլ մյուս ռեակցիոն թեորիաների սոցիոլոգիական հավատամքն հենց այն է, որ «ապացուցեն», թե քաղաքակրթությունը իբր պետք է «փրկեն» ամերիկյան իմպերիալիստները՝ անգլո-սաքսոնների համաշխարհային տիրապետությունը հաստատելու միջոցով։

Հոգեբանական դպրոցի կողմնակիցները իրենց տերերին՝ ամերիկյան իմպերիալիստներին, առաջարկում են «յուրաքանչյուր անհատի բնազդներն ու հույզերը կարգավորել այն ժամանակ, երբ նա երիտասարդ է, և վերամշակել նրանց», այսինքն՝ պատրաստել հասարակական ապուշներ, ապականել մարդու գիտակցությունն ու հոգին «երիտասարդ հասակից, զարգացնել նրա մեջ անասնական բնազդներ, մարդկանց դարձնել մարդասպաններ»։

Հոգեբանական դպրոցի կողմնակիցներից մեկը՝ «սոցիոլոգիական պաթոլոգիայի մասնագետ» Ֆիլիպ Սելեզնիկը «Հաստատությունների խոցելիությունը մասսայական հասարակության մեջ» գրքում, որը հրատարակվել է 1951 թվականին, առաջարկում է սոցիալական ապուշներ պատրաստելու իր մեթոդը։ Նա խորհուրդ է տալիս ոչնչացնել բոլոր այն հիմնարկները, որտեղ մասսաները կրթություն են ստանում, նրանց համար անմատչելի դարձնել ամեն տեսակ կուլտուրա և քաղաքակրթություն, հասցնել նրանց վայրենության վիճակին, որտեղ գործում են միայն գազանային բնազդները։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 425—426։

Մասսայական կրթությունը, զառանցում է այդ դեղեներատը, «սոցիալական պաթոլոգիա է»։ Նա գտնում է, որ ժամանակակից բուրժուական կուլտուրայի ճգնաժամի պատճառը, այդ հասարակության կուլտուրայի հյուծման ու կործանման, ընդհանուր անկման պատճառը այն է, որ կուլտուրան և կրթությունը մասսայական են դառնում։ Կրթությունը, կուլտուրան, քաղաքակրթությունը դարձնել մասսաների սեփականությունը, ասում է կուլտուրայի այդ գանգստերը, նշանակում է ոչնչացնել կրթությունը, ոչնչացնել կուլտուրան, քաղաքակրթությունը։

Պարզ է դառնում, թե ինչպիսի նողկալի, մարդատյաց ֆունկցիա են ստանձնել հոգեբանական դպրոցի կողմնակիցները, ամերիկյան սոցիոլոգների ընկերության անդամները։

Ժամանակակից ռեակցիոն սոցիոլոգիական մտքի բնագավառում զգալի տեղ է կրավում վիճակագրական մեթոդը։ Բազմաթիվ սոցիալական «հետազոտություններ» պատկանում են այն մարդկանց, որոնք հետևում են սոցիոլոգիայի վիճակագրական մեթոդի դպրոցին։ Նրանք փորձում են, «մոդուսների» և «մեդիանների» հիման վրա, «ճշգրիտ» համեմատական հետազոտման ենթարկել հասարակական օրինաչափությունները։ Նրանք իրենց մեթոդի մեջ են մրտցրել թվերի, ինդեքսների, հաճախականության աղյուսակների, «բաժան շարքերի» հարաբերությունների, հարաբերակցությունների և այլ հասկացողությունների գործադրությունը, ելնելով այն կեղծ, խորապես ռեակցիոն պոզիտիվիստական ըմբռնումից, որի համաձայն «զուտ վիճակագրությունը լույս է սփռում հասարակական կյանքի էական կողմերի վրա»։

Հասարակական երևույթների զուտ վիճակագրական վերլուծման նպատակն է՝ հասարակական կյանքի այս կամ այն կողմի վերաբերյալ վիճակագրական տվյալներով, աղյուսակներով, շկալաներով և գծագրերով խճողել սոցիալական գլխավոր հարցը՝ դասակարգերի պայքարը, կապիտալիստական հասարակության կործանման անխուսափելիությունը, օրինաչափությունը և արտադրության նոր, սոցիալիստական եղանակի ստեղծման անհրաժեշտությունը։

Հայտնի է, որ սոցիոլոգիայի վիճակագրական մեթոդով, մանավանդ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակից հետո, շատ էին տարվել տրոցկիստները և մասնավորապես մախիստ ու դավաճան Բազարովը, որը վիճակագրական «վերլուծման» միջոցով «նախատեսում էր» սովետական իշխանության կործանման և Ռուսաստանում բուրժուական-կալվածատիրական կարգերի վերականգնման անխուսափելիությունը։

Ներկայումս ֆաշիստացող Ամերիկայում վիճակագրական մեթոդն օգտագործում են նաև ռեակցիոն սոցիոլոգիայի այնպիսի «ջոջեր», ինչպիսին է Հիդդինգսը։ Նա գրել է մի ամբողջ աշխատություն՝ «Մարդկային հասարակության գիտական հետազոտությունը», որը հիմնված է հատարուկության հետազոտման «վիճակագրական մեթոդի» վրա։ Այդ աշխատության մեջ մոլի ռեակցիոներ և նողկալի ստախոս Հիդդինգսը փորձում է վիճակագրական «ճշգրիտ» նյութերի հիման վրա տալ մարդու վարքագծի, «անհատների վարքագծի» «գիտական» որոշումը, գտնել «սոցիալական տիպերը», «սոցիալական փոփոխական մեծությունները», սահմանել «մարդկային հասարակության փուլերը», չափել «սոցիալական էներգիան» և ապացուցել, որ այդ բոլոր գործոնները «հանդուրժելի են դարձնում» ժամանակակից կապիտալիստական շահագործումը և, որ հասարակությունը այդ պայմաններին այնքան է հարմարվում, որ «իներտ» է դառ-

նում դեպի մյուս բոլոր փոփոխությունները կամ վերափոխումները, այսինքն՝ դեպի սոցիալական ռևոլյուցիաները։

Կիրառելով այդ բոլոր խորամանկամտությունները, վիճակագիր սոցիոլոգները համոզված են, որ վիճակագրական մեթոդի միջոցով կարելի է ապացուցել ամեն բան։

Տարակույս չի կարող լինել, որ վիճակագրությունը, հասարակության տնտեսական կյանքի երևույթների գիտական հաշվառումը, կարևոր գործոն է, որը նպաստում է հասարակական երևույթների ճանաչմանը։ Սակայն վիճակագրությունը իմպերիալիստական ռեակցիայի այդ ցուլերի, փաստերը կեղծողների ձեռքում ուղղված է ժողովրդի դեմ, իմպերիալիստական գործամոլներին օգնում է նրանց քաղաքական ու տնտեսական սֆերաներում, միջազգային ասպարեզում կատարվող շանտաժին, նպաստում է աշխատավոր մասսաների ավելի ուժգին տնտեսական ու հոգևոր ճորտացմանը։

Հասարակության կյանքի ուսումնասիրության «վիճակագրական մեթոդը» իր բոլոր առաջադրություններով ու հասկացողություններով, իր բոլոր ձեռնածություններով ու խորամանկամտություններով, իր լիակատար արտահայտությունն է գտել Էլմերի «սոցիալական հետազոտության» սիստեմում, որը շարադրված է դեռ 1927 թվականին լույս տեսած նրա «Սոցիալական հետազոտության տեխնիկան» գրքում։

Սոցիալական հետազոտության մեթոդով, որը տալիս է ֆերմերների դրության «զուտ» նկարագրությունը, բնակարանային վիճակի և տնտեսական կյանքի արդյունաբերության առանձին ճյուղերի, կենցաղի, կուլտուրայի նկարագրությունը, իմպերիալիստների լակեյները փորձում են «ապացուցել», որ ժամանակակից Ամերիկայում չկա հասարակության դասակարգային բաժանում՝ չքավորների ու հարուստների, կապիտալիստների ու բանվորների։ Այդպես, սոցիոլոգիայի վիճակագրական մեթոդի կողմնակիցներից մեկը, հատուկ ձևով կազմած հարցաթերթիկ տարածելով, «սահմանել է», որ Պլենվիլի քաղաքում (ԱՄՆ) իբր «դասակարգային բաժանում չկա»։

Վիճակագրական մեթոդի կողմնակիցների սոցիալական խնդիրը պարզ է։ Նրանց նպատակն է ապացուցել, որ կապիտալիզմը, մանավանդ ամերիկյան կապիտալիզմը «զարգանում է «առանց ճգնաժամերի ու աղքատության», «առանց դասակարգերի պայքարի»։ Այդ թեորիայի կողմնակիցները վիճակագրական ձեռնածություններով փորձում են թաքցնել այն բոլոր գազանությունները, շանտաժն ու ավազակային մեթոդները, որոնք գործադրում են ԱՄՆ-ի իմպերիալիստներն իրենց և այլ երկրների ժողովուրդների նկատմամբ։

«Զուտ» նկարագրության մեթոդի կողմնակից ամերիկյան սոցիոլոգները այդ մեթոդն անվանում են նաև «սոցիալական փաստերի հավաքման ճշգրիտ մեթոդ», այնպիսի փաստերի, որոնք վերաբերում են աշխարհիս մարդկանց թվին, մյուս երկրների հողերի ու հարստության քանակին, մարդկանց կյանքին ու տնտեսական հնարավորություններին, ժամանակակից խոշոր քաղաքներին, այլ պետությունների տրամադրությունների տակ եղած ավերիչ ուժերին, պետությունների և ազգերի եկամուտների, նրանց տնտեսական ու քաղաքական ռեսուրսների որոշմանը։

Այդպիսով վիճակագրական հետազոտության մեթոդը միլիտարիստական Ամերիկայի պայմաններում ծառայում է ամերիկյան իմպերիալիզմին, նրա ամենանողկալի ագրեսիվ ձգտումներին։

Ռեակցիոն բուրժուական սոցիոլոգիան անցյալ դարի իդեալիստական փիլիսոփայության զինանոցից հրապարակ է հանել անձնավորության ազատության պրոբլեմը և վերջինս մեկնաբանում է խորապես իդեալիստորեն, ինդիվիդուալիստորեն ու հակամարդկայնորեն։ Ինչպես որ Հեգելի փիլիսոփայության մեջ «քննադատորեն մտածող» անձնավորությունները, հերոսները առանձնացվում են իրենց նմանների հասարակությունից, դառնում են մարդու բարձր ենթատեսակը և հանդես են գալիս որպես պատմության «ստեղծողներ», այնպես էլ այժմ «քննադատորեն մտածող անձնավորությունները» հակադրվում են ամբոխին, «բարոյազուրկ մասսաներին»։ Ժամանակակից ռեակցիոն բուրժուական սոցիոլոգները բարձրից են նայում «ամբոխի» վրա, արհամարհում են մասսաներին, մերժում են նրանց ստեղծարար հնարավորությունները, նրանց դերը հասարակության կյանքում և քարոզում են անձնավորության վերաբերյալ սանձարձակ ֆաշիստական թեորիաներ։

«Պատմության նկատմամբ հեգելյան հայացքի այդ ծաղրանկարը»—ինչպես ասում էր Մարքսը — «հարստացած» Նիչշեի, Շպենգլերի, Հիտլերի և Մուսոլինիի մարդատյաց զառանցանքներով, ներկայումս քարոզում են իմպերիալիզմի իդեոլոգները։ Իդեալիստական փիլիսոփայությունը մի կողմը դնում է մասսաներին, ամբոխին, որպես պատմության նյութական պասիվ, անոգեշունչ և ոչ պատմական տարր, իսկ մյուս կողմը՝ ոգին, քննադատությունը, որպես ակտիվ տարր, որից իբր բխում է ամեն տեսակ պատմական գործողություն։ Մինչև այժմ էլ կան սոցիոլոգներ, որոնք հասարակական վերափոխման ակտը սահմանափակում են «քննադատորեն մտածող» անձնավորությունների մտավոր գործունեությամբ։

Այն իդեալիստական փիլիսոփայության հողի վրա, արտադրության նեխվող կապիտալիստական եղանակի հիման վրա, այժմ Եվրոպայի և Ամերիկայի կապիտալիստական երկրներում տարածվել են հասարակության վերաբերյալ բարոյազուրկ, ինդիվիդուալիստական, վոլյունտարիստական թեորիաների բազմաթիվ ենթատեսակներ, ընդ որում հասարակության վերաբերյալ այդ թեորիաների տարածմանը ուղեկցում են զրպարտությունների կույտեր մարքսիստական-լենինյան թեորիայի հասցեին։

«Մարքսիստները մերժում են անձնական, անհատական ազատությունը», աղաղակում են նրանք, «կոմունիզմը մարդու գրությունից չի բխում, ուստի և հակամարդկային է», ոռնում են բուրժուական ինդիվիդուալիստները, «մարքսիզմը մերժում է անհատական ընդունակությունների զարգացումը», զրպարտում են նրանք։ Իսկ ինդիվիդուալիզմը, իբր, ապահովացնում է մարդուն, ազատ ասպարեզ է ստեղծում «ստեղծարար անձնավորության» համար։ Ինդիվիդուալիզմը հռչակում է «պատվասիրություն», «առաջադիմություն» և, բացի այդ բոլորից՝ «հաջողություն»։ Անհատին ազատություն տալ, ասում են նրանք, նշանակում է, որ անհատին պետք է թույլատրելի լինի հասնել մեծագույն առաջադիմության՝ անձնական օգուտն իրականացնելու միջոցով։

Որպեսզի հասարակական կյանքը «չքարանա», «չպնդանա», որպեսզի հասարակությունը սառած չմնա մի կետի վրա, ասում է Ռոսսը, նա պետք է շարունակ անհատականացվի։ Անհատականացված հասարակությունը իբր թե փխրեցնում է հասարակական գուղձերը և հասարակության անդամների գործունեությունը դերծ է պահում քարանալուց։ Միայն ինդիվիդուալիզմի ոգին, հայտարարում է այդ ռեակցիոնները, կարող է ազատության հասցնել, ընդ որում

այդ «ազատությունը» կոմերցիոնալ ազատություն է, օգուտի ազատություն։ «Ամբոխի ռևոլյուցիան մերժում է անհատական շահերը»,— ասում է Ռոսսը,— այդ պատճառով նա պետք է մերժվի։ «Ռևոլյուցիայի հոգեբանությունը,— ասում է Ռոսսը,— պաթոլոգիական երևույթ է։ «Քանի որ պրոլետարները ենթակա են ամբոխի հոգեբանությանը, նրանք վստահության արժանի չեն և նրանց պետք է վերաբերվել կասկածամտորեն»։

Ինդիվիդուալիզմը, նրա «ժամանակակից» մեկնաբանությամբ, ամբողջովին մերկացնում է իրեն, որպես հակապրոլետարական, հակաժողովրդական իդեոլոգիա։ «Անձնավորության համար բարիք» և «անհատական ընդունակությունների ազատություն» պահանջելը իրականում հանդիսանում է հիշյալ թեորիայի իսկական նպատակները քողարկելու ձևը միայն, իսկ այդ թեորիայի բովանդակությունը հակամարդկային է։ Տարակույս չի կարող լինել, որ այդպիսի ազատության քարոզը խավարամոլություն է և ստորաքարշություն ռեակցիայի առջև։ Դա մի բուռն կապիտալիստների ազատությունն է մասսաներին տնտեսապես ու քաղաքականապես ստրկացնելու գործում։

Իրականում ինդիվիդուալիստական, վոլյունտարիստական թեորիաների ակտիվ պրոպագանդայի գլխավոր խնդիրն է՝ սնացնել ռևոլյուցիան, թքել մասսայական շարժման վրա, բարձրացնել ինդիվիդուալիստական, այսինքն՝ մոնոպոլիստական ձեռներեցությունը։ Այդպես, օրինակ, ԱՄՆ-ի իմպերիալիստների ծառա Լյա-Պիրը, երկյուղով համակված վաղվա հանդեպ, ռևոլյուցիայի հանդեպ, փորձում է մերժել մասսայական շարժումը, որպես պրոլետարիատի պայքարի ավելորդ ձևը աշխարհի վերափոխման գործում։ Նա մասսայական շարժումը հայտարարում է «տվյալ (այսինքն ամերիկյան—Տ. Ա.) կուլտուրային խորթ կոլեկտիվ մոլորություն»։

Բառային աճպարարություններով մերժելով մասսաների ռևոլյուցիայի միջոցով հասարակությունը վերափոխելու հնարավորությունը, արդի բուրժուական սոցիոլոգները փորձում են իրենց ընթերցողներին համոզել, որ մասսայական շարժումը հակահասարակական, ոչնչացնող, անկայուն երևույթ է, որն իբր միայն խորացնում է հասարակության ներքին բաժանումը։ Նրանք երկյուղ են սերմանում ժողովրդի մեջ դեպի պրոլետարական ռևոլյուցիան, հավատացնելով, որ ռևոլյուցիան միայն ավերում է և ոչինչ չի ստեղծում։ «Մասսայական շարժումը,— ասում է ամերիկյան իմպերիալիստների վերոհիշյալ լակեյ Լյա-Պիրը,— դա սոցիալական փոթորկի մի տեսակն է, որն ամեն ինչ օդ է բարձրացնում, առաջացնում է գործունեություն և ապա միայն բեկորներ է թողնում իրենից հետո»։

Ժամանակակից բուրժուական սոցիոլոգները ջանք չեն խնայում, որպեսզի ժխտեն ընդհանրապես ռևոլյուցիայի և մասնավորապես պրոլետարական ռևոլյուցիայի պրոգրեսիվ դերը։ Նրանք ռևոլյուցիան դիտում են որպես հասարակության ճգնաժամ, որպես կազմալուծող դասակարգային կոնֆլիկտ։ Ընդսմին նրանք ամեն կերպ հավատացնում են, թե սոցիալական ճգնաժամերը և կոնֆլիկտները չի կարելի լուծել ո՛չ մասսայական շարժման, ո՛չ ռևոլյուցիաների, ո՛չ էլ դասակարգային պայքարի որևէ այլ ձևի միջոցով։ «Դասակարգերի միջև,—ասում է աջ սոցիալ-լակեյ Լյա-Պիրը,—կարող է կոնֆլիկտ ծագել և խաղաղորեն լուծվել միայն էվոլյուցիոն փոփոխությունների միջոցով»։

Իրենց հռչակելով որպես պրոլետարիատի «իսկական բարեկամներ», ժամանակակից իմպերիալիզմի լակեյները հավատացնում են, որ արդի հասարա-

կությունը կարող է հանգիստ ու խաղաղ զարգանալ Էվոլյուցիայի միջոցով։ Ռեակցիոն սոցիոլոգիայի հռչակած այդ տխրահռչակ «էվոլյուցիայի» նպատակները պարզ են, այն է՝ ապահովել ժամանակակից հասարակության ավելի արդյունավետ գոյությունը, այսինքն՝ ամրապնդել շահագործողների տիրապետությունը շահագործվողների նկատմամբ, նպաստել աշխատավոր մասսաների լիակատար ու վերջնական հոգևոր և բարոյական ստրկացմանը։

Այդ բոլորի մեջ ամենանողկալին այն է, որ մոնոպոլիստների վարձկաններն իրենց ձևացնում են հումանիստներ, փորձում են ապացուցել, թե իրենք ռևոլյուցիա, մասսայական շարժում չեն ցանկանում, ելնելով հենց բանվորների շահերից, չեն ցանկանում նրա համար, որպեսզի հասարակությունը «իզուր և ապարդյուն» չծախսի իր ուժերը։

Ստեղծելով ինդիվիդուալիզմի խղճուկ, աղքատիկ թեորիան, ժամանակակից ռեակցիոն, մանավանդ ամերիկյան սոցիոլոգիան զինվում է ինդիվիդուալիստական բոլոր թեորիաներով, որոնք ստեղծել են գերմանական ֆաշիստները և այլ ռեակցիոներներ։ Ամերիկյան «դեմոկրատիան», որն իրեն հռչակում է որպես «անձնավորության ազատության» և «անհատական ձեռներեցության» դեմոկրատիա, ավարտում է այն ուղին, որը բացել են մարդու և մարդկության գազանաբարո թշնամիները՝ գերմանական ֆաշիստները։

Ժամանակակից բուրժուական սոցիոլոգիայի մի այլ, ոչ պակաս կարևոր, խորապես ռեակցիոն դիծը, որը մերկացրել են մարքսիզմ-լենինիզմի կլասիկները, հանդիսանում է հասարակության զարգացման օբյեկտիվ օրինաչափությունների ժխտումը, հասարակական կյանքի երևույթները ճանաչելու հնարավորության ժխտումը։

Բլայը, Պետցոլդը, Մախը, Ավենարիուսը և ռուսական մախիստները,— ասել է Լենինը, մերժեցին մարքսիզմը նրա համար, որ նա ճանաչում է օբյեկտիվ ճշմարտությունը, հենց այն պատճառով, որ Մարքսի ամբողջ տնտեսական ուսմունքը, պատմական մատերիալիզմի թեորիան ճանաչում է օբյեկտիվ ճշմարտությունը, բնության և հասարակության օբյեկտիվ օրինաչափությունները։ Ընդորում այն օրինակները, որոնք բերում էին մախիստական սոցիոլոգները, իրենց «կոնցեպցիաները» «պարզաբանելու» համար, Լենինը անվանում է ծիծաղաշարժ, դատարկ և գռեհիկ։

Ռեակցիոն սոցիոլոգիան այժմ էլ ջանք չի խնայում հասարակության օբյեկտիվ օրինաչափությունները, հասարակական երևույթների ճանաչման հնարավորությունը ժխտելու համար և քարոզում է ամբողջովին ռելյատիվիստական սոցիոլոգիական թեորիաներ։ Ներկայումս սոփեստությունը հանդիսանում է հասարակության մասին բուրժուական ռեակցիայի ստեղծած խորապես հակագիտական, գռեհիկ ու ծիծաղաշարժ թեորիայի գլխավոր մեթոդը։

Ժամանակակից բուրժուական սոցիոլոգների «սիստեմի» բնորոշ առանձնահատկություններից մեկն այն է, որ նրանք գիտակցաբար առաջին պլանն են քաշում երկրորդական, պատահական պրոբլեմներ, աշխատում են բազմաթիվ «գործոններով» մոլորեցնել մարդկանց անթիվ երկրորդական հարցերի լաբիրինթոսում, նրանց համոզել, որ հասարակական կյանքում տիրում է «քաոս» և «անկարգություն», որ հասարակության զարգացման օբյեկտիվ օրենքներն անհնարին է ճանաչել, որ այդպիսիք գոյություն չունեն»։

Ժամանակակից իմպերիալիստական սոցիոլոգիական «միտքը» հատկապես

աշխատում է զանազան կեղծ թեորիաների կառուցման վրա, որոնք ժխտում են հասարակական զարգացման օբյեկտիվ օրինաչափությունները։

Բուրժուական սոցիոլոգիայի այդ կողմը Լենինից հետո մերկացրեց ընկեր Ստալինը։ Ընկեր Ստալինը ցույց տվեց, որ տնտեսական օրենքների օբյեկտիվ բնույթը ժխտող մարդիկ ըստ էության ժխտում են գիտությունը, որովհետև գիտությունը չի կարող ապրել և զարգանալ առանց օբյեկտիվ օրինաչափությունները ճանաչելու։ Հասարակության տնտեսական կյանքում օբյեկտիվ օրինաչափությունների գոյության ժխտումը,— ասում է ընկեր Ստալինը, ...«կհասցներ այն բանին, որ մենք կընկնեինք քաոսի ու պատահականությունների թագավորությունը, մենք ստրկական կախման մեջ կընկնեինք այդ պատահականություններից, մենք մեզ կդրկեինք պատահականությունների այդ քաոսը ոչ միայն հասկանալու, այլև պարզապես այդ քաոսից գլուխ հանելու հնարավորությունից։

...Վերջին հաշվով մենք կընկնեինք «տնտեսագիտական» ավանտյուրիստների կամայականության ճանկը, որոնք պատրաստ են «ոչնչացնելու» տնտեսական զարգացման օրենքները և «ստեղծելու» նոր օրենքներ, առանց հասկանալու և հաշվի առնելու օբյեկտիվ օրինաչափությունները»[1]։

Տիրապետող դասակարգերը, որոնք ղեկավարում են կապիտալիստական հասարակության կյանքը, ամեն կերպ խրախուսում են սուբյեկտիվիստական կոնցեպցիաները, տարընթացություն առաջացնում և բթամտություն են քարոզում հասարակագիտական թեորիաներում, ստեղծում են քաոսի և խառնաշփոթության իրադրություն, որպեսզի դրանով խանգարեն ժողովրդին, աշխատավոր մասսաներին՝ ըմբռնելու հասարակական կյանքի ճշմարիտ պրոբլեմները, ճանաչելու հասարակության զարգացման օրինաչափությունները։

Պարզ է դառնում, որ բուրժուական սոցիոլոգիան ժխտում է հասարակության օրինաչափ զարգացումը և նրա ճանաչման հնարավորությունը, ժխտում է հասարակության վերաբերյալ գիտական թեորիաները, որպեսզի ազատորեն քարոզի ֆիդեիզմը, կղերականությունը, կոսմոպոլիտիզմը։ Նա բացասում է հասարակական իրադարձությունները նախատեսելու հնարավորությունը, որպեսզի ատելություն և թշնամանք տարածի բանականության հանդեպ, քարոզի ալոգիզմը, իրրացիոնալիզմի պաշտամունքը, հասարակության վերաբերյալ անկումային թեորիաներ։ Միստիկան և սոլիպսիզմը բուրժուական սոցիոլոգիայի վերջին հանգրվանն են։

Մերժելով հասարակության զարգացման օբյեկտիվ տնտեսական օրենքները, բուրժուական սոցիոլոգիան, հակագիտական զազրելի դիտավորություններով, հասարակության պատմությունը դիտում է որպես պատահական գործոնների և իրադարձությունների մի գումար, որոնք հնթակա չեն ոչ ուսումնասիրման, ոչ էլ ճանաչման։ Նա դիտավորյալ կերպով խուսափում է արտադրողական ուժերին և արտադրական հարաբերություններին, արտադրության կապիտալիստական եղանակի բազիսին ու վերնաշենքին վերաբերող հարցերի վերլուծումից և «խորանում է» ամեն տեսակ մետաֆիզիկական ու սխոլաստիկ պրոբլեմների մեջ, փորձում է ազատվել սոցիալական հրատապ հարցերից տերմինաբանական խորամանկամտությունների միջոցով։

Ժամանակակից բուրժուական սոցիոլոգները, ձգտելով գոհհկացնել հասա-

[1] Ի. Ստալին, *Սոցիալիզմի էկոնոմիկական պրոբլեմները ՍՍՌՄ-ում*, էջ 92։

ռակության վերաբերյալ գիտությունը, որպես սոցիալական փոփոխություններ-ի գլխավոր ուժը քարոզում են ամեն ինչ «ոգի», «սեր», «կրոն», «հավատ», «ռասա», «բնազդ», «ընդօրինակում», «հայտնագործություն», «ազատ ժամանց», «հաջողություն», «անաշխատ դասակարգեր», «մեծ անձնավորություն», «դեմոկրատիա», մի խոսքով՝ ինչ կուզես, ընդհուպ մինչև մոդան, շրթունքի ներկ, լվացքի օճառ*։ Այդպիսով բուրժուական սոցիոլոգները «ամենաթեթևամիտ» վերաբերմունք են ցույց տալիս հասարակական երևույթների վերլուծմանը, հասարակության վերաբերյալ «նոր» թեորիաների ստեղծմանը։ Նրանք հեշտությամբ մերժում են, հեշտությամբ հաստատում են, միայն թե որքան կարելի է շատ վճարեն իրենց։ Զարմանալի չէ, որ այդ գրոտումները հեշտությամբ են տպվում և արագորեն տարածվում։ Որքան շատ լինեն հասարակության վերաբերյալ հակագիտական թեորիաներ, այնքան ավելի քաոս ու տարընթացություն կստեղծվի մարդկանց գիտակցության մեջ, այնքան ավելի հեշտ կլինի թաքցնել աշխատավորներից ժամանակակից կապիտալիզմի հիմնական օրենքը, այն է՝ նրանց պայքարը առավելագույն շահույթների համար, որոնք ապահովելու նպատակով տեղի է ունենում մարդկանց վայրագ շահագործումը, տվյալ երկրի բնակչության մեծամասնության քայքայումն ու աղքատացումը, այլ երկրների, մանավանդ հետամնաց երկրների ժողովուրդների ճորտացումն ու սիստեմատիկ կողոպտումը, պատերազմի հրահրումը և ժողովրդական տնտեսության ռազմականացումը։

Այդ բոլոր փաստերով է բացատրվում այն, որ կապիտալիստական հասարակության մեջ, մանավանդ «դեմոկրատական» Ամերիկայում, գոյություն ունեն հասարակության վերաբերյալ ամենաբազմերանգ հակագիտական թեորիաներ, ինչպիսիք միայն կարելի է ենթադրել։

Ռեակցիոն դասակարգերի դիպլոմավոր լակեյները՝ բուրժուական պրոֆեսորները, որպես իդեոլոգիական շուկայի իսկական բիզնեսմեններ, սենսացիա են ստեղծում կոնցեպցիաների, հասարակության, նոր գրքերի, ընտանիքի վերաբերյալ նոր «թեորիաների», բարոյականության, բարոյագիտության շուրջը, մարդկանց անձնական կյանքի բարելավման շուրջը և այլն։ Իսկ իրականում նրանք հետապնդում են մի նպատակ՝ մոլորեցնել ժողովրդին սոցիոլոգիական «գիտական» հերյուրանքների ու հնարանքների թավուտներում և դրանով իսկ դժվարացնել աշխատավոր մասսաների համար արտադրության կապիտալիստական եղանակի խորտակման անխուսափելիության ըմբռնումը։

Մերժելով հասարակության տնտեսական օբյեկտիվ օրենքների գոյությունը և դրանք ճանաչելու հնարավորությունը, ռեակցիոն սոցիոլոգները իրենց ուշադրության կենտրոնն են դարձնում անձնավորության անհատական խառնվածքի ու հակումների ուսումնասիրությունը, նմանություն են փնտրում ծնողների և նրանց սերունդների խառնվածքի միջև, փորձում են կապիտալիստական հասարակության պայմաններում տիրող ողբերգությունը բացատրել անհատի խառնվածքով կամ ծնողներից ժառանգած գծերով։

Նրանք փորձում են ապացուցել, որ մարդու դժբախտության պատճառը նրա ողբերգական վիճակի աղբյուրն է, նրա որոշ օրգանների վատ աշխատան-

* Այսպես, օրինակ՝ Ռոսսը իր «Փոփոխվող Ամերիկա» աշխատության մեջ «Լվացքի օճառ և դեմոկրատիա» ենթավերնագրված գլխում դեմոկրատիզմի զարգացումը դիտում է երկու «հիմնական» ֆակտորների մեջ՝ օճառի և ջրի։

քը, էնդոկրինային գեղձերի արտադրանքը՝ հորմոնները, ինչպես նաև նյարդաբջիջների ու հյուսվածքների բնությունը, հոգնածության պատճառով տոքսինների տարածումը, մարդու տեմպերամենտը, նրա հակումները և այլն։ Նրանց կարծիքով մարդու ճակատագիրը որոշում են նրա բնավորության այնպիսի գծեր, ինչպիսիք են՝ ռիսկ անելու սերը և զգուշությունը, խոհեմությունը, ինքնասպանության հակումը։

Նրանք կարևոր նշանակություն են տալիս անձնավորության ժառանգած գծերին՝ հասարակության մեջ նրա գրավելիք տեղը որոշելու գործում, գտնելով, որ «անձնավորությունը հանդիսանում է ժառանգած գծերի կաղմակերպումն ու մշակումը հասարակական ազդակների ներգործությամբ»։ Այլ կերպ ասած՝ հասարակության մեջ վերջնականապես մշակվում և ձևակերպվում են անձնավորության ժառանգած բոլոր գծերը։ Դրանցից նրանք եզրակացնում են, որ անձնավորության դժբախտության ու երջանկության աղբյուրը ծնողներից ժառանգած գծերն են։

Այդ «սոցիոլոգիան» զբաղվում է այն հարցով, թե «ով կարող է երջանիկ լինել»։ Այդպես, օրինակ, Բոգարդուսն իր ընթերցողներին սովորեցնում է, թե երջանիկ կարող է լինել նա, ով հակումն ունի ինքնախորանալու, անձնատուր լինելու հայեցման, ով խելամիտ է, այսինքն հնազանդ է ճակատագրին։ Այդ պահանջներին համապատասխան, ժամանակակից, մանավանդ ամերիկյան «սոցիոլոգիան» զբաղվում է այնպիսի «պրոբլեմներով», ինչպիսիք են, օրինակ, այն, թե ում կարելի է անվանել խաբեբա, հիմար, տարօրինակ խելառ և այլն, ով կարող է լիդեր լինել, ինչպիսի տվյալներ են պետք առաջնորդ դառնալու համար, հասարակության որ խավերից ավելի շատ լիդերներ են դուրս գալիս, բերում են նրանց տոկոսային հարաբերությունը։ Նրանք «ապացուցում են, «որ լիդերները պետք է ունենան բնավորության այնպիսի գծեր, ինչպիսիք են կամակորությունը, ճարպկությունը։ «Նրանք պետք է ինչ որ արտասովոր բան կատարեն»։

«Գիտնականները» «ապացուցում են», որ ավազակների, մարդասպանների, գանգստերների և քաղաքական առաջնորդների հիմնական գծերը իրար նման են։ Այն բոլոր հատկությունները,— ասում է ավազակային սոցիոլոգ Բոգարդուսը,— որոնք հարկավոր են «մեծ, հոման խնդիրներ» իրականացնելու համար, անհրաժեշտ են նաև գողերի, բանդիտների և նմանների խոշոր շայկաներ գլխավորող առաջնորդների համար։ Դա իսկական ամերիկյան սոցիոլոգիա է։

Այդ «գիտնականները» սահմանորոշում են լիդերների հատուկ կլասիֆիկացիա, նոմենկլատուրա՝ բանդիտ լիդերներ, ավազակ լիդերներ, մարգարե լիդերներ, սուրբ լիդերներ, քաղաքագետ լիդերներ։

Նրանց թեորիաներում հատուկ տեղ է գրավում ֆյուրերիզմի պաշտամունքի քարոզը, որը վերցված է գերմանական ֆաշիստների զինանոցից։

Այս բոլոր փաստերը վկայում են Ամերիկայի և կապիտալիստական մյուս երկրների բուրժուական սոցիալական մտքի անկման, ոչնչության և ողորմելիության մասին, բուրժուական հոգևոր կուլտուրայի հետադիմության մասին։

Չնայած բուրժուական փիլիսոփայության բացահայտ քայքայման ու սրնանկության, այնուամենայնիվ կապիտալիզմի բուլվարային սոցիոլոգները փորձում են համոզել իրենց ընթերցողներին, որ միայն իրենց փիլիսոփայությունը ընդունակ է «բացահայտելու մարդկային համակեցության գաղտնիքը»։

Հետևաբար, այդ սոցիոլոգների խնդիրն է՝ խեղաթյուրել և մթագնել մարդ-

կային գիտակցությունը «սոցիոլոգիական» խորամանկամտություններով, ոչընչացնել առողջ դատողության բոլոր տարրերը, զրկել մարդուն հասարակության կյանքի երևույթները գիտականորեն վերլուծելու հնարավորությունից, շեղել նրան գիտական ճշմարտության, հասարակության վերաբերյալ գիտական ճանապարհից։

Սրանք են ընդհանուր գծերով ժամանակակից ռեակցիոն բուրժուական սոցիոլոգիայի գլխավոր տենդենցները։ Կապիտալիստական հասարակության տնտեսական և քաղաքական նեխումը ավարտվում է նրա հոգևոր, իդեոլոգիական նեխումով։